

մեր Կարապետ Արքեպ.ի մասին ինչ ինչ անցողակի յիշատակութիւններ կը գտնուին, որոնք Կարապետ Արքեպ.ի մէկ քանի ինքնագրութիւններէն լուսաւորութիւն կ'առնուն:

Այս ինքնագրութիւններն, որչափ ինձ ծանօթ են, եօթը տաղ եւ երեք նամակներ են:

Կարապետ Արքեպ. տաղասէր մըն էր եւ տաղասաց: Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանին մէջ կը պահուին երկու տաղարաններ, որոնց վրայ Հ. Տաշեանի Յուլիանի մէջ (էջ 458—462) կարեւոր տեղեկութիւններ տրուած են: Այս երկու տաղարանները Կարապետ Արքեպ.ի ընտանեաց անձինքներու ձեռօք գրուած են այլեւայլ ատեններ եւ խառնիխուռն, եւ նոյն ընտանիքին քով կը պահուէին մինչեւ 1894, երբ անկէ վիեննա փոխադրուեցան: Ասոնց մէջ կան մեր Կարապետ Արքեպ.ի յօրինած եօթը տաղերը, զորոնք ըստ ժամանակին տեղաւորելով՝ ամբողջն այստեղ յառաջ կը բերեմ: Ասոնցմէ հինգը հոգեւոր երգեր են, իսկ երկուքը պատմական: Իր կենսագրութեան համար կարեւոր է մանաւանդ է. տաղը: Տաղերէս կը հասկցուի նաեւ՝ որ Հնձացի Տէր Յակօբ քահանայն՝ բաց ի Կարապետ Արքեպ. որդիէն, ունեցած է Յովհաննէս տիրացու եւ Ունան որդիներ: Վերջնէս սերած էին վիեննայի Մխիթարեան Միաբանութեան անդամ երկու նշանաւոր Հ. Պօղոս եւ Հ. Ղեւոնդ Յովնանեան հարապատները, ինչպէս նաեւ այժմու միաբան Հ. Քերովբէ Յովնանեանը: